ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 3(34), 31 մարտի, 2021թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵՐԴՈՒՄԸ

Մարտի 2-ի երդման արարողությունը տարբերվում էր մյուս արարողություններից: Շարահրապարակում էին ՀՀ ոստիկանությունում նոր կազմավորվող պարեկային ծառայության համար նախատեսված 5-ամսյա դասընթացին մասնակցող սովորողները: Նրանք երդվեցին անմնացորդ նվիրվել հայրենիքին, պետությանն ու ժողովրդին:

Երդման արարողությանը ներկա էին ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Արա Ֆիդանյանը, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստինե Գրիգորյանը, ՀՀ արդարադատության նախարարության միջազգային իրավական համագործակցության համակարգող-խորհրդական Ամալյա Հովսեփյանը, «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ղեկավար Դանիել Իոանիսյանը, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ղեկավար կազմը՝ Կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանի գլխավորությամբ:

Միջոցառման մեկնարկին հյուրերը ծաղիկներ խոնարհեցին ծառայության և Արցախյան պատերազմի ընթացքում զոհված ոստիկաններին նվիրված հուշակոթողին:

-Այսօր նշանակալի օր է, քանի որ սկիզբ է դրվում ոստիկանության նոր ծառայության ստեղծմանը: Ձեր բարեխիղճ ծառայությունը միտված է ոչ միայն հանցավորության դեմ պայքարին, հասարակական կարգի ամրապնդմանը, այլև ծառայելու հասարակությանը և լինելու յուրաքանչյուր քաղաքացու կողքին, - շնորհավորական իր ուղերձում նշեց ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Արա Ֆիդանյանը:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստինե Գրիգորյանը, դիմելով ապագա պարեկներին, նույնպես շնորհավորեց ու մաղթեց բարի երթ և պատվարժան ծառայություն. «Դուք այսօր երդվեցիք հավատարիմ լինել սահմանադրական կարգին, անվերապահորեն ղեկավարվել օրենքներով, պաշտպանել հայրենիքը: Այս օրը նշանավորվեց որպես մեծ ճանապարհի մի կարևոր հանգրվան»:

Սովորող Գևորգ Բաբայանն իր և ծառայակիցների անունից շնորհակալություն հայտնեց այս հնարավորությունն ընձեռելու համար՝ նշելով, որ այսուհետ պարեկային ոստիկանը նորովի է ներկայանալու հասարակությանը. «Ցանկացած երկրի մասին պատկերացումը կազմվում է նաև ոստիկանության արտաքին ծառայությունից: Անցնելով ծառայության՝ կաշխատենք մեծ նվիրումով՝ ներդնելով ուսուցման ընթացքում ձեռք բերած մասնագիտական կարողություններն ու հմտությունները»:

Միջոցառումն ավարտվեց հանդիսավոր քայլերթով:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Այս թվականի մարտի 11-ին տեղի ունեցան ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 2021 թվականի 3-րդ և Կրթահամալիրի խորհրդի 2-րդ նիստերը:

Գիտական խորհրդի օրակարգի հարցերի քննարկման արդյունքում գիտական խորհուրդը որոշեց հաստատել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի աշխատողների և սովորողների արտասահմանյան գործուղումների կարգը, տպագրության երաշխավորեց «Գիտական աշխատանքների ժողովածու 2021» ձեռնարկը, ինչպես նաև քննարկվեց ակադեմիայի 1-ին կուրսի նախկին սովորողի վերականգնման հարցը:

Կրթահամալիրի խորհրդի թիվ 2 նիստի օրակարգի միակ հարցը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի վճարովի ուսուցման սովորողների 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական վարձավճարների մասնակի փոխհատուցումն էր: Ձեկույցով հանդես եկավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետի տեղակալ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ոստիկանության փոխգնդապետ Ռ. Ռ. Մարանդյանը: Կրթահամալիրի խորհուրդը քննարկեց սովորողների կողմից ներկայացված 23 դիմում և բավարարեց 17-ը:

Նիստերն ավարտվեցին օրակարգային հարցերի քննարկումներով և արդյունավետ որոշումներով:

ՁԵԶ ԵՐԲԵՔ ԲԱՑԱԿԱ ՉԵՆՔ ԴՆԻ

Պատերազմ, ծանր արհավիրք, մահ, կորուստ, խեղված ճակատագրեր, փշրված սրտեր....

Այս պատերազմն էլ խլեց մեզանից լավագույններին՝ ամեն մեկը մի տան ճրագ, ամեն մեկը մի փոքրիկ, դեռևս չբացահայտված մոլորակ:

Անմոռանալի է նրանց սխրանքը, անդառնալի են, ցավոք, հավերժի ճամփորդ մեր եղբայրները, որոնք անմահացան՝ հանուն մեր լինելիության, հանուն մեր գալիք արշալույսների:

Կորցնելու դառնությունը բաժին հասավ նաև մեր Կրթահամալիրին. աչքի լույս հինգ երիտասարդներ հայրենիքին նվիրեցին ամենաթանկը՝ իրենց երիտասարդ կյանքը:

Վերջերս հարազատ կրթօջախի Սուրբ նահատակների հիշատակն անմահացնող մատուռում մոմավառություն էր, որ կազմակերպել էր Կրթահամալիրի ուսանողական խորհուրդը: Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ ստեղծվեց նաև նրանց անմար հիշատակը հավերժացնող փառքի անկյուն, որտեղ սովորողները միշտ թարմ ծաղիկներ են խոնարհում: Նրանք մեր կյանքի լույսն են, իսկ մենք մեր վիշտը փորձում ենք ճեղքել նրանց լույսով, նրանց պայծառ լույսով, ովքեր իրենց կյանքով, իրենց անսահման նվիրումով ու անձնազոհությամբ ապացուցեցին, որ ընտանիքում և բուհում հայրենասիրության դասերը շատ լավ են սերտել:

Սիրելի՛ Վախթանգ, Վահե, Նորայր, Դավիթ, Նարեկ, մենք երբեք ձեզ բացակա չենք դնելու, հավիտյան վառ ենք պահելու ձեր խնկարկելի հիշատակը:Դուք միշտ մեզ հետ եք, մեր շարքերում, ավելին՝ մեր մտքում եք, մեր սրտերում՝ հավերժ երիտասարդ, բարի ժպիտով, կրակոտ աչքերով, և շարունակելու եք ամեն օր, ամեն ժամ հայրենասիրության ու ազգապաշտության դասեր տալ մեզ ու գալիք սերունդներին:

Մեր խոնարհումը ձեզ ու ձեր օրինակելի ընտանիքներին.

ՎԱԽԹԱՆԳ ՕՀԱՆՅԱՆ
ՎԱՀԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՆՈՐԱՅՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԴԱՎԻԹ ՋԱԼԱՎՅԱՆ
ՆԱՐԵԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՐԲ ԳՈՐԾԸ ԴԱՌՆՈՒՄ Է ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Ոստիկանի՝ վտանգներով լեցուն կյանքը հաստատումն է այն անքննելի ճշմարտության, որ ոստիկան լինելը ոչ թե մասնագիտություն է, այլ նվիրում ու առաքելություն, առաքելություն, որ չի ընդհատվում անգամ վաստակած թոշակի անցնելիս, և տարիների մեծ վաստակ ունեցող ոստիկանը թոշակի անցնելուց հետո անգամ շարունակում է անխոնջ զինվորը մնալ այդ խիստ պատասխանատու ու պատվաբեր առաքելությանը: Եվ դա կատարվում է առանց հրամանի, առանց հրահանգի, այլ սրտի կանչով հասարակությանը ծառայելու, օրենքին մինչև վերջ հավատարիմ մնալու մի ներքին մղումով: Այդպես իրենց ապրած ողջ կյանքով ու գործով վկայում են, որ եղել և մնում են ազգային իսկական արժեքների պաշտպանն ու պահապանը:

Նման մի ճակատագրի մասին է լինելու մեր խոսքը:

Ոստիկանության գնդապետ Վարուժան Կալինինի Գրիգորյան:

Ծնվել է 1956թ. Տավուշի մարզի Բերդ քաղաքում: Հայրենի գեղատեսիլ քաղաքում ստացել է միջնակարգ կրթություն: 1974 թ. զորակոչվել է Սովետական բանակ և ճակատագրի բերումով ծառայել է ՍՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերում: Կարճ ժամանակահատվածում հայորդին աչքի է ընկել և զորացրվելուց առաջ զորամասի կոմերիտական կազմակերպության ուղեգրով գործուղվել էստոնական ՍՍՀ Ներքին գործերի նախարարություն՝ ծառայությունը շարունակելու: Դեռևս դպրոցական տարիներին ռոմանտիկ գաղափարներով տարված երիտասարդի համար կարծես բացվում էին ինքնադրսևորման և ինքնահաստատման լայն դռներ, և մնում էր միայն բաց դռներից ներս մտնել ու իրականացնել վաղեմի երազանքները:

1977թ. հունիսից էստոնական ՍՍՀ ՆԳՆ Կալինինի Ներքին գործերի բաժին, 1978թ. Տալլինի ՆԳՆ միլիցիայի միջնակարգ մասնագիտական դպրոց, 1981-1986թթ. ՍՍՀՄ ՆԳՆ ակադեմիա և մինչև հայրենիք վերադառնալը՝ 1989թվականը, ծառայել է էստոնիայի ՆԳՆ-ում և զբաղեցրել տեսչական պաշտոններ:

Հայրենի լեռներին բարձր ճախրի սովոր հայորդին չէր կարող օտար ծովերի վրա հավիտյան օրորվող ճայ մնալ՝ չնայած հայրենիքից հեռու փոխադարձ սիրով կապվել էր գեղեցկուհի էստոնուհու և կազմել օրինակելի ընտանիք, որտեղ հասակ էին առնում երկու աչագեղ երեխաներ:

Եվ կարոտը հայրենասեր Գրիգորյանին 1990 թ. բերեց Հայաստան: Հայրենիքում ծառայությունն սկսեց ՀՀ ՆԳ նախարարությունից, ապա՝ Մաշտոցի բաժին, որից հետո՝ Դավիթաշենի բաժանմունք, որտեղ ծառայության անցավ որպես պետ: Այդ թվականներին էր, որ երիտասարդ ու եռանդուն սպան իր կենսագրության մեջ արձանագրեց մի քանի ծանր հանցագործությունների բացահայտումներ: Երբ սկսվեց Արցախյան պատերազմը, 1990 թ.փետրվարից մինչև 1991թ.օգոստոս, քուն ու հանգիստ կորցրած, մոռացած ընտանիք ու հարազատներ, ակտիվ մասնակցություն ունեցավ սահմանամերձ տարածքների պաշտպանությանը:

1994-2010թթ. ծառայեց ՀՀ ՆԳՆ տարբեր բաժիններում, ծառայեց անմնացորդ նվիրումով, սպային վայել արժանապատվությամբ, պարտքի և պատասխանատվության գերագույն ըմբռնումով: Հայրենիքը, բարձր գնահատելով երախտավորի արժանիքները, նրան պագևատրեց «Անբասիր ծառայության համար» 1-ին, 2-րդ, 3-րդ աստիճանի մեդալներով, ՆԳՆ «Գերազանց ծառայության համար» կրծքանշանով, ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից՝ «Վազգեն Սարգսյան» մեդալով:

2010 թվականը մի յուրահատուկ էջ բացեց պրակտիկ աշխատանքի մեջ թրծված, մասնագիտական գիտելիքների հարուստ պաշար ամբարած ոստիկանության փոխգնդապետի առջև: Նրան վստահվեց Կրթահամալիրում դասավանդելու ոստիկանության վարչական գործունեություն առարկան: ՀՀ ոստիկանության կրթահամալիրը ոստիկաններ պատրաստող միակ դարբնոցն է, որտեղ արհեստավարժ մասնագետների կարիք միշտ էլ կա: Կարճ ժամկետում ոստիկանության փոխգնդապետ Գրիգորյանն ընդունվեց ու սիրվեց թե՛ պրոֆեսորադասախոսական անձնակազմի և թե՛ սովորողների կողմից: Կրթահամալիրում էլ նա ստացավ իր հերթական՝ գնդապետի կոչումը: Սպային վայել կարգապահություն, իր գործին գիտակցորեն մոտեցող մարդու

համեստություն, կոկիկություն, հարգանք սովորողի և գործընկերոջ նկատմամբ, դիմացինին օգնելու և աջակցելու պատրաստակամություն. ահա այն առանձնահատուկ գծերը, որոնցով օժտված է ոստիկանության գնդապետը:

... Կրթահամալիրի ծառուղով քայլում է վերջերս վաստակած թոշակի անցած ոստիկանության գնդապետ Գրիգորյանը, քայլում է արժանապատիվ, գլուխը բարձր, աչքերի մեջ՝ կյանք տեսած մարդու հանգստություն, բարի ժպիտը շուրթերի անկյունում թաքնված, և կարծես տարիները նրա կողքով են անցել, կարծես տարիները խուսափել են շատ միջամտել տղայական թեթևությամբ քայլող, կյանքին բարի աչքերով նայող տղամարդու արտաքինին: Քայլվածքի մեջ ինքնահաստատված մարդու վստահություն կա, հայրենիքն անմնացորդ սիրով սիրող հայ տղամարդու արժանապատվություն, իր գործին նվիրված սպայի հաստատակամություն:

Հարգելի՛ պարոն Գրիգորյան, մեզ մնում է միայն շնորհավորել Ձեզ վաստակած թոշակի անցնելու կապակցությամբ և ասել՝ շարունակե՛ք Ձեր կյանքի ուղին նույն ոգով, նույն նվիրումով՝ զինելով ապագա ոստիկաններին մասնագիտական գիտելիքներով ու ոստիկանությունում երկարամյա ծառայության Ձեր հարուստ կենսափորձով:

Թվում է՝ այլևս Կրթահամալիրում ասելու և փոխանցելու դեռ շատ բան կունենաք:

Պատիվ ունենք...

Ծառայակից ընկերների անունից՝
Ռ. Մուսաելյան

Շնորհավոր ՄԱՐՏԻ 8

Բարետես արտաքինով մի կնոջ հարցնում են.

- Ո՞րն է ձեր այդչափ գեղեցիկ ու գրավիչ լինելու գաղտնիքը:

Կինը պատասխանում է.

- Շուրթերիս համար գործածում եմ ճշմարտություն, ձայնիս համար՝ քաղցրություն, աչքերիս համար՝ գութ, ձեռքերիս համար՝ ողորմություն, կերպարանքիս համար՝ պարկեշտություն, սրտիս համար՝ սեր... Եվ բոլոր նրանց, ովքեր ինձ չեն սիրում՝ աղոթք...

Առաջին պատմական իրադարձությունն այս օրվա առնչությամբ 1857 թվականի մարտի 8-ն էր, երբ Նյու Յորքի տեքստիլ գործարանների կին աշխատողներն իրենց իրավունքների պաշտպանության համար քայլերթով անցան քաղաքի փողոցներով: Պատճառը ցածր աշխատավարձն ու աշխատանքի վատ պայմաններն էին:

Տոնի պատմությունն ավանդաբար կապվում է Կլարա Ցետկինի անվան հետ, ով 1910թ. մարտի 8-ին սոցիալիստ կանանց միջազգային կոնֆերանսին առաջարկեց մարտի 8-ը նշել որպես աշխատավոր կանանց օր:

Կանանց իրավունքների համար սկսված պայքարից էլ ստեղծվեց Կանանց միջազգային օրը, որն սկզբում կոչվում էր Աշխատավոր կանանց միջազգային օր: Պաշտոնապես միջազգային օր հռչակվելով՝ այն ավանդաբար նշվում է ամբողջ աշխարհով մեկ ամեն տարի մարտի 8-ին, սակայն տարբեր երկրներում նշվում է տարբեր կերպ. որոշ երկրներում այն հանրային տոն է, այլ վայրերում՝ ամբողջությամբ անտեսվում է, մի ուրիշ տեղ կանացիության փառաբանման օր է:

Այսօր աշխարհում մարտի 8-ին կանայք արժանանում են հակառակ սեռի առավել ընդգծված ու ջերմ ուշադրությանը և գնահատանքին՝ տոնի իրական խորհուրդը կարծես թե մղելով երկրորդական պլան:

Գարունը նոր կյանքի և զարթոնքի սկիզբ է, և այն առանց կանանց հնարավոր չէ պատկերացնել: Գարնան ամենապայծառ տոներից է սա, քանի որ կանայք իրենց էությամբ գարուն և կյանք են: Այո՛, կինը նոր կյանք տվող, կյանքին նոր իմաստ հաղորդող էակ է: Կնոջը պետք է մեծարել, հարգել և սիրել միշտ՝ անկախ տոնից: Ծաղկառատ այս տոնը մեկ անգամ ևս առիթ է ստեղծում, որպեսզի տղամարդիկ վերագնահատեն կանանց, որպեսզի երեխաներն առավել հոգատար և ուշադիր լինեն իրենց մայրերի, քույրերի և տատիկների նկատմամբ:

Մայր լինելն Աստծու ամենամեծ պարգևն է, իսկ հայ մայր լինելը՝ գերագույն կոչում:

Սիրելի՛ մայրեր, թող որ միշտ շրջապատված լինեք ձեր զավակների, ընտանիքի անսպառ սիրով, նվիրվածությամբ և ջերմությամբ: Մայրությունը հավերժական կոչում է: Հիրավի, մոր սիրտն անդունդ է, որի խորքում միշտ ներում կգտնես:

Հայ կնոջ կերպարը՝ ավանդապահ, համեստ, խելացի, աշխատասեր, նազելի, ցանկացած տանջանք ու զրկանք տանող, որը երկար դարեր արմատացել է հայերիս ու գուցե նաև այլազգիների մոտ:

Այս գարունը համեմատելի չէր ոչ մի գարնան հետ... Այս մարտի 8-ին առավել հարգանքի և մեծարանքի արժանի են որդեկորույս մայրերը, որոնք այլևս երբեք ծաղիկներ չեն ստանալու իրենց որդիներից, այլևս նրանց քաղցր ժպիտները և անուշ մաղթանքները չեն լսելու: Իրենց սիրելիներից հավերժ զրկվեցին շատ կանայք, անկատար երազով մնացին շատ հայուհիներ: Կյանքի բնական օրենք է խախտվել՝ մայրերն են այժմ ծաղիկներ նվիրում իրենց որդիներին, կանայք են այցելում իրենց ամուսիններին, ջահել աղջիկներն են այցի գնում իրենց նահատակ դարձած ընկերներին: Հիրավի, տոնը նշելու սիրտ չմնաց, տոներին արդեն միակ ամենաթանկ մաղթանքը դարձել է խաղաղությունը: Սիրելի՛ կանայք, աղջիկներ և հատկապես որդեկորույս հայ մայրեր, պետք է ուժեղ գտնվեք, հավատով լցվեք և փորձեք ժպտալ: Երջանիկ ու առո՛ղջ եղեք: Աշխարհում դեռ պետք է լսվեն հայ մանկան ճիչեր՝ հանուն մեր նահատակված տղաների վառ հիշատակների: Թող որ միայն պայծառ և ուրախ գարուններ լինեն հետայսուս:

Շնորհավո՛ր բոլորիս տոնը, սիրելի՛ կանայք:

Լիանա Խրշոյան
ոստիկանության լեյտենանտ

Պատվաբեր և պատասխանատու

ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՎԵՀԱԳՈՒՅՆ ԶԳԱՑՈՒՄՈՎ

Աշխարհում մասնագիտությունները բազմաբնույթ են: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, իր նրբությունները: Երբ դեռևս պատանի էի, ես ինքս վստահ որոշեցի, որ ուզում եմ ծառայել ոստիկանությունում:Տարիներ անցան, բայց միտքս չփոխեցի և շարունակեցի երազել այդ մասնագիտության մասին: Ինքնաճանաչողությամբ հասկացա, որ պատասխանատվության և արդարության զգացումը կարևոր դեր ունեն բնավորությանս մեջ: Իսկ այս հատկանիշները բնորոշ են հենց ոստիկանի մասնագիտությանը:

Իրավապահ մարմինների աշխատակիցների աշխատանքային առօրյան, նրանց ծառայության առանձնահատկությունները, կարևորությունն ու բարդություններն ինձ պարզապես գրավում են:

Անկասկած, ոստիկանությունում ծառայելը պահանջում է հատուկ ջանքեր, քանի որ այն առանձնանում է վտանգներով, հոգեբանական սթրեսներով, ու եթե մարդը նախապես պատրաստված է, գիտի՝ ինչ է ուզում և ինչի է ձգտում. այդ դեպքում միայն նա կարող է հաղթահարել ցանկացած դժվարություն ու խոչընդոտ:

Այս մասնագիտությունը, անկասկած, կօգնի ինձ հետագայում էլ ավելի զարգացնել և բարելավել այնպիսի հատկություններ, ինչպիսիք են անաչառությունը, կարգապահությունը, տոկունությունը, պարտքի և պատասխանատվության զգացումն ու կատարողականությունը:

Մարդկանց օգնելը, հասարակությանն աջակցելը և պաշտպանելը հանցավոր ոտնձգություններից, պետության ամրապնդմանը մասնակից լինելը հարգանքի են արժանի: Համոզված եմ, որ պաշտպանելով պետությունը՝ միաժամանակ պաշտպանություն և աջակցություն եմ ստանում իմ պետությունից:

Այո՛, կարող եմ վստահ ասել, որ ոստիկան լինելը հպարտություն է, և ծառայելով հայրենիքին՝ ծառայում ես հարազատ ժողովրդիդ:

Գևորգ Բաբայան
պարեկային ծառ. ուսուց.7-րդ վաշտ, 20-րդ դասակ

ԻՄ ՄԵԾ ԵՐԱԶԱՆՔԸ

Յուրաքանչյուր անհատ կյանքում ունի իր անցնելիք ճանապարհը, որն ընտրվում է հանգամանքների բերումով, պատահականության կամ էլ իր իսկ ցանկությամբ: Մասնագիտության ընտրությունն էլ ներառվում է այս տրամաբանության մեջ: Տարիներ առաջ, երբ ցանկություն առաջացավ ծառայել ոստիկանությունում, շատերն իմ շրջապատում քայլս որակեցին խենթություն և ձգտում էին հակառակում համոզել ինձ՝ մատնանշելով այն բազմաթիվ դժվարությունները և փորձությունները, որոնք պիտի հաղթահարեի: Եվ քանի որ դա իմ մեծ երազանքն էր, չէի պատրաստվում հետքայլ անել: Ոստիկանի կերպարը, համազգեստ կրելու բուռն ցանկությունն ինձ ուժ ու եռանդ տվեցին, որպեսզի մնամ անկոտրում ու անդրդվելի իմ ձգտումների մեջ, և ահա մի քանի տարի է, որ կենսագրություն եմ կերտում ոստիկանական մեծ ընտանիքում, միաժամանակ ապացուցում եմ, որ հայ կինն իր ուրույն տեղն ու դերն ունի նաև այդ բնագավառում, որը շատերին թվում է դժվար ու ոչ կանացի:

Արժանապատվությամբ ու մեծ պատասխանատվությամբ եմ կրում համազգեստ, որը թե՛ գեղեցիկ է, թե՛ պարտավորեցնող: Տարիներ շարունակ աշխատելով ոստիկանությունում՝ ինքս ինձ համար սահմանել եմ կանոններ և օրենքներ, որոնցով առաջնորդվել եմ և միշտ մնացել հավատարիմ:

Սկզբունքայնություն, կարգապահություն, գաղտնապահություն, ընկերասիրություն, հավատարմություն երդմանս. ահա սրանք են իմ երկարաժամկետ ծառայության

անդավաճան երաշխիքները:

Իմանալով ոստիկանության բարեփոխումների, նոր պարեկային ծառայության ստեղծման մասին՝ ցանկացա համալրել այդ շարքերը, քանի որ ցանկացած նորարարություն ինձ հոգեհարազատ է և հետաքրքիր: Նորի ձգտման պահանջով այսօր ՀՀ ոստիկանության կրթահամալիրում հատուկ դասընթացներ եմ անցնում և երջանիկ եմ, որ հետայսու շարունակելու եմ ծառայությունս նոր պարեկային ծառայությունում՝ երբեք չընկրկելով, հուսախաբ չանելով ծառայակից ընկերներիս, բարձր պահելով ոստիկանի պատիվն ու արժանապատվությունը:

Մարինե Հովակիմյան
պարեկային ծառայութ. ուսուց.
7-րդ վաշտ, 20-րդ դասակ

ԾԱՌԱՅՈՒՄ ԵՄ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Արցախյան պատերազմի հերոս Մոնթեն, ում հիշատակը միշտ վառ կմնա յուրքանչյուր հայի սրտում, անընդհատ անհանգիստ էր, ասում էր՝ շատ գործ կա, ու ամեն մեկը պիտի իր վրա պատասխանատվություն վերցնի այդ գործն իր մասով կատարելու համար: Պետք է նկատել՝ բոլոր ճշմարիտ հերոսներն իրենց պատասխանատու են զգացել առաջացած խնդիրներում, լծվել են գործի և սխրանքներ գործել:

Պատասխանատվությունն ամենակարևոր հատկանիշներից է, որ մարդը պետք է ունենա: Այն մարդուն առաջ է մղում իր գործում և նախաձեռնություններում: Պատասխանատու մարդը միշտ նպատակասլաց է, ուշադիր և զգոն: Նա փորձում է կատարյալ լինել ամեն ինչում և իրեն շրջապատող աշխարհը դարձնել իդեալական մի տիրույթ:

Կործանարար է և՛ իր, և՛ ընտանիքի, և՛ շրջապատի, և՛ ամենակարևորը՝ հայրենիքի համար, երբ պատասխանատվության զգացում չեն ունենում պատասխանատու պաշտոններ զբաղեցնող մարդիկ:

Ոստիկանի գործը համընդհանուր հարգանք վայելող, պատվաբեր, պատասխանատու և պարտավորեցնող մասնագիտություն է: Ոստիկանը պետք է վստահություն ներշնչի, որպեսզի յուրաքանչյուր քաղաքացի ոստիկան տեսնելիս իրեն պաշտպանված զգա: Այսպիսի արդյունքի հասնելու համար ոստիկանը սեփական գիտելիքների իմացության և հմտության աստիճանը բարձրացնելու խնդիր պետք է դնի իր առջև, պետք է լինի կրթված, լավ իմանա իր իրավունքներն ու պարտականությունները: Հարկ է նշել, որ թեև պատվաբեր է, սակայն երբեմն էլ չգնահատված է մեր աշխատանքը, բարդ, անձնազոհ և վտանգավոր: Ոստիկանության՝ երդում տված աշխատակիցը գիտի, որ հնարավոր են պահեր, երբ օրերով տուն չի գնալու, չի տեսնելու ընտանիքի անդամներին, ընկերներին, բայց և գիտի, որ իր տուն չգնալու, չքնելու մյուս նժարին դրված է այլոց ընտանիքի անվտանգությունն ու անդորրը:

Այս գիտակցումով էլ ընտրել եմ ժողովրդին ծառայելու իմ առաքելությունը:

Պատի՛վ ունեմ ծառայելու մեր ոստիկանական մեծ ընտանիքում, Հայաստանի Հանրապետությանն ու հայ ժողովրդին:

Լուսինե Բալաբեկյան
Քոլեջի 2-րդ կուրսի 2-րդ դասակի սովորող, ոստիկանության սերժանտ

ՀԱՎԵՐԺ ՓԱ՛ՌՔ ՔԵԶ, ԴՈՒՇՄԱՆ

Դուշմանը՝ Վարդան Ստեփանյանը, ծնվել է 1966 թվականի մարտի 8-ին Երևանում, Արցախյան պատերազմի հերոս է:

«Ձենք վերցնել ու գնալ կռվելու՝ արդեն իսկ մեծ հերոսություն է, իսկ ինչպիսին կլինի զինվորը՝ լա՞վ թե՞ վատ, կախված է հրամանատարից»:

Շատ բարդ էր Արցախ մեկնող նորակոչիկների գործը: Վարդանը ոգեշնչում էր պատանի զինվորներին: Հետո ձեռքն էր վերցնում մի բուռ հող, ուտում և պահանջում, որ այդպես անեն նաև տղաները, ապա սկսում էր խոսել, որի միտքն այն էր, որ մեր երկիրը, մեր հողը մեր մայրն է, և աշխարհում նրանից ավելի քաղցր բան չկա:

«Սիրե՛ք նրան, ինչպես սիրում եք ձեր հորն ու մորը, որովհետև մեր հողը մեր բոլորիս ծնողն է»:

Իսկ պատերազմը գնալով ուժգնանում էր: Կատաղի մարտեր էին տեղի ունենում Երասխավանի, Ասկերանի, Շահումյանի շրջաններում: Վարդանն անցնում է Կոռնիձոր, այնուհետև մշակույթի աշխատողի փաստաթղթերով անցնում է Արցախ, որտեղ մասնակցում է Բադարա և Ասկերանի շրջանի Դահրավ գյուղերի ինքնապաշտպանության կազմակերպմանը:

1991 թվականի հոկտեմբերի 30-ին «Դաշնակցություն» ջոկատի կազմում, որի հրամանատարն էր Աշոտ Ղուլյանը (Բեկոր Աշոտ), մասնակցում է ԼՂՀ Հադրութի շրջանի Տող գյուղի ազատագրման մարտերին: Այնուհետև Վարդանի ջոկատը մտնում է Քարագլուխ գյուղ, որն ադրբեջանցիների կողմից իրականացված «Օղակ» օպերացիայի արդյունքում ավերակ էր դարձել: Վարդանի տղերքի հաջորդ հաղթանակը Ստեփանակերտի արվարձան Կրկժանի՝ ադրբեջանական ամուր հենակետի ոչնչացմանն ուղղված օպերացիան էր՝ 1992 թվականի հունվարի 22-ին: Կրկժանն ուղիղ կապ ուներ Շուշիի հետ, որտեղից թուրքերն անընդհատ մարդկային ու ռազմական համալրում էին ստանում: Կրկժանի համար մղվող դիրքային մարտերը տևեցին ավելի քան մեկ ամիս, և ահա եկել էր վճռական հարձակման անցնելու պահը: Հայկական գրոհն սկսվեց գիշերը՝ երկու ուղղությամբ: Իրականացված գործողության մեջ իրենց մեծ դերն ունեցան Դուշմանի տղերքը՝ շուրջ 40 կռվող: Նրա խումբը, հարձակվելով թիկունքից, անակնկալի բերեց ազերիներին: Քարինտակի հաղթանակը դարձավ հայկական ուժերի առաջին խոշոր հաղթանակն Արցախյան պատերազմում: Սա դրեց հայերի՝ իրար հաջորդող հաղթանակների սկիզբը. 1992 թվականի փետրվարի 10-ից սկսած՝ հայկական ուժերն իրար հետևից ոչնչացրին Գուշչուլար և Լեսնո (Մեշալու) գյուղերի ադրբեջանական կրակակետերը: Այդ հաղթանակների ողջ քաղցրությունն ու դառնությունը զգաց և ինքը՝ Դուշմանը, որը մարտերի անմիջական մասնակիցն էր:

Հաջորդ կարևորագույն հաղթանակներից էին Խոջալուի կրակակետերի ոչնչացումը (փետրվարի 25-26-ի գիշերը) և Ստեփանակերտի օդանավակայանի ու Ստեփանակերտ-Ասկերան ավտոճանապարհների բացումը՝ ազատումն ազերիներից: Գործողությունը փայլուն իրականացվեց և դարձավ անգնահատելի հաղթանակ ԼՂՀ-ի մայրաքաղաքի ու շրջափակման մեջ գտնվող բնակավայրերի անվտանգության ապահովման համար: Այս հաղթանակները կարևոր նշանակություն ունեցան նաև Շուշիի ազատագրման համար: Խոջալուի ազատագրման ժամանակ Բեկոր Աշոտի ուժերը հարձակման են անցել Ասկերանի կողմից:

Դուշմանը վստահություն էր ներշնչում տղաներին: Նրա համոզվածությունը, որ հայերն անպայման կազատագրեն Արցախ աշխարհի պատմական Շուշի մայրաքաղաքը, գոտեպնդում էր տղերքին:

Հայրենիքի անունից սխրանքներ գործել և հավատալ հաղթանակին - ահա սա՛ է մեր ուժի աղբյուրը:

Եվ հայ զենքի, հայ զինվորի իսկական սխրանքը դարձավ հնամենի Շուշիի ազատագրումն ադրբեջանաթուրքական 72-ամյա օկուպացիայից: Անառիկ բերդ հիշեցնող Շուշի մտած ստորաբաժանումների մեջ առաջիններից էր Բեկոր Աշոտի գլխավորած 1-ին դաշնակցական վաշտը, որի մեջ մտնում էր նաև Դուշման Վարդանի գլխավորած խումբը:

▶ 4

ԱՐԺԱՆԱՑԵ՛Ք ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻՆ

«Ոստիկանությունում գերազանց ծառայության համար» կրծքանշանով պարգևատրվում է ոստիկանությունում օրացուցային հաշվարկով 5 տարուց (չի հաշվարկվում ոստիկանության ուսումնական հաստատությունում ուսումնառության ժամանակահատվածը) ոչ պակաս ծառայության ստաժ ունեցող ծառայողը՝ ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու, ծառայողական բարձր ցուցանիշների, ինչպես նաև օրինակելի և անբասիր ծառայության համար:

ԱՍՈՒՅԹՆԵՐ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

Տղամարդը և կինը 2 նոտաներ են, առանց որոնց մարդկային հոգու լարերը չեն տալիս ճիշտ և լրիվ ակորդ:

***

Լավ կնոջ հետ ամուսնությունը մի նավահանգիստ է կյանքի ալեկոծության մեջ, իսկ վատի հետ՝ ալեկոծություն է նավահանգստում:

***

Իսկական կինն ունենում է երեք տարիք՝ երիտասարդություն, երկրորդ երիտասարդություն և հավերժ երիտասարդություն:

***

Երբեք մի՛ ամուսնացիր այնպիսի կնոջ հետ, որի հետ հնարավոր է ապրել: Ամուսնացի՛ր այնպիսի կնոջ հետ, առանց որի հնարավոր չէ ապրել:

***

Կինը ղեկին նույնն է, ինչ աստղը՝ երկնքում. դու նրան տեսնում ես, իսկ նա քեզ՝ ոչ:

***

Մորն անհրաժեշտ է քսան տարի, որ որդուն տղամարդ դարձնի, իսկ մեկ ուրիշ կին քսան րոպեում նրան ապուշ կդարձնի:

***

Եթե կինը չի հանձնվում, նա հաղթում է, իսկ հանձնվելու դեպքում իր օրենքներն է թելադրում հաղթողին:

***

Տղամարդիկ միշտ ճիշտ են, իսկ կանայք երբեք չեն սխալվում:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

ՄԱՅՐ

Մայր բառն ասելիս ի՞նչ մտածեցիր...
Երկի՞ր, տիեզե՞րք, ամե՞նն ուզեցիր,
Ի՞նչ էիր կարծում՝ ո՞վ կմոտենար,
Երբ օրորոցում մամա կանչեցիր:

Մանուկը մոր մեջ Աստծուն է տեսնում,
Մայրական սերն է Աստծուն հիշեցնում:
Թույլ ցավից անգամ՝ երեխան լացի,
Ոչ ոք չի սփոփի իր մորից բացի:

Մեր Աստված սեր է, վստա՛հ եմ ասում,
Այդ սերն էլ Աստված դրեց մոր ներսում,
Միակ պաշտպանը թույլ մանկան համար,
Այդ ամենազորը, որ կոչվում է ՄԱՅՐ:

Անցնում են օրեր, տարիներ բազում,
Սկսում ես խոսել, քայլում ես, վազում...
Ինչքան մեծանաս, բայց մեկ է էլի
Աշխարհը քոնն է, երբ մա՛յր ես ասում:

Մեր կյանքում հաճախ նեղում ենք նրան,
Շատերին գիտեմ՝ գոռում են վրան,
Փակում են մորը մի մութ սենյակում,
Ինչպես կորած գիրք՝ մի հին դարակում:

Գիրք է մոր սիրտը՝ ուրախ ու տխուր,
Ձեռագիր գրված աղոթքներ են լուռ,
Գովեստի խոսքեր՝ սպասումով լեցուն.
Գիրք չէ հասարակ, այլ իմաստնություն:

Կկարդաս, երբ որ մորդ կարոտես:
Պատմությունն այդտեղ ծանո՞թ քեզ թվաց.
Զսպի՛ր արցունքդ, երբ կնկատես՝
Գրքի էջերում անունդ է գրված:

Թե մեկ էլ կարծես՝ մեծ ես այս կյանքում,
Անգամ եթե քեզ կանչում են՝ հայրի՛կ,
Հիշի՛ր այդ գիրքը՝ սրտիդ դարակում,
Հեղինակն էլ՝ քեզ շա՜տ սիրող մայրիկ:

Աստված արարեց աշխարհը խոսքով:
Երկիրն իր չափով մեծ է, խոսք չունեմ,
Բայց երբ մի վայրկյան նստեմ մորս քով,
Աշխարհն ինչի՞ս է, տիեզե՜րք ունեմ:

Դիաննա Ղազարյան
պարեկային ծառայութ. ուսուց.
1-ին վաշտ, 2-րդ դասակ,

ՄԱՅՐԻԿԻՍ

Ինձ քո գի՛րկն առ ու տա՛ր աշխարհից.
Այսօր ուզում եմ անձայն երազել,
Քո ջերմ գի՛րկն առ ու փրկի՛ր չարից.
Այսօր ուզում եմ առանց մեղք ապրել:

Քո տաքուկ գրկում թու՛յլ տուր հեծկլտալ
Եվ նաև թու՛յլ տուր բարձր ծիծաղել,
Թու՛յլ տուր կորցնել ժամանակ ու ցավ,
Թու՛յլ տուր քո գրկում վերստին ծնվել:

Ինձ քո գի՛րկն առ, որ ես մանկանամ

Ու նորից լինեմ այնքա՜ն երջանիկ,
Ինձ ամուր գրկի՛ր, որ չհեռանամ
Եվ նորից դառնամ մի անհոգ մանկիկ:

...Ինձ քո գի՛րկն առ ու տա՜ր աշխարհից.
Դրախտ է գիրկդ, գրկի՛ր ինձ նորից ...

Արևիկ Մկրտչյան
ոստիկանության լեյտենանտ

ՀԱՎԵՐԺ ՓԱ՛ՌՔ ՔԵԶ, ԴՈՒՇՄԱ՛Ն

3 ◀ Մայիսի 7-8-ի գիշերը Շուշիի ուղղությամբ իրականացվեց հրետանային հուժկու հարված, որից հետո սկսվեց գրոհը: Դուշմանի կռվողները հարձակումն սկսեցին քաղաքի արևելյան կողմից և արդեն առավոտյան ազատագրել էին Շուշիի հարակից թաղամասերը: Շոշ գյուղի կողմից սկսվեց գնդապետ (այժմ՝ գեներալ-մայոր) Արկադի Կարապետյանի գլխավորած գումարտակի գրոհը: Հյուսիս-արևմուտքից գրոհին միացավ նաև Բեկոր Աշոտի գլխավորած ուժերի մնացած մասը: Հարավից հարձակում գործեցին Նվեր Չախոյանի այսպես կոչված «աֆղաններ-ի» վաշտը, ինչպես նաև Ժիրայր Սեֆիլյանի և Աշոտ Խաչատրյանի գլխավորած գումարտակները: Նույն ժամանակ գնդապետ Սեյրան Օհանյանի գլխավորած ուժերը շրջանցեցին քաղաքը հարավ արևմուտքից՝ ազատագրելով Մալիբեկլու, Քյոսալար, Բաշքենդ, Ջավադլար և ուրիշ բնակավայրեր, ընդհանուր առմամբ՝ 17 բնակավայր: Շուտով հարձակմանը միացավ նաև Վալերի Չիտչյանի գումարտակը: Սամվել Բաբայանի գլխավորած ջոկատը Բերձորի կողմից փակեց ադրբեջանցիների հնարավոր օգնության ճանապարհը:

Առավոտյան դեմ հայկական ուժերն իրականացրին միասնական գրոհ: Շուշիում թողնվել էր մարդասիրական միջանցք՝ թշնամու հեռանալու համար (Բերձորի՝ այն ժամանակ Լաչինի կողմից): Մայիսի 9-ին՝ կեսօրին մոտ, քաղաքն ազատագրվեց: Մարտի դաշտում բազմաթիվ զոհեր թողնելով՝ մարդասիրական միջանցքով թշնամին դիմեց փախուստի: Հայկական կողմը տվեց 27 զոհ և շուրջ 180 վիրավոր: Ադրբեջանական կողմը տվեց շուրջ 300 զոհ և 700 վիրավոր: Հայկական կողմում մնացին թշնամու ամբողջ հրետանին և զենքերը:

Մայիսի 11-ին Դուշմանի խումբը Հայկի՝ էջմիածնի ջոկատի հետ շարժվեց Զարիսլու գյուղի ուղղությամբ՝ պաշտպանելու ստրատեգիական նշանակություն ունեցող ավտոճանապարհը: Այդ ժամանակ ադրբեջանական ղեկավարությունն իր առաջ խնդիր էր դրել վերադարձնել Շուշին: Բախվելով Դուշմանի գլխավորած ուժերի հետ՝ ադրբեջանցիները կատաղի մարտերից հետո, կրելով զգալի մարդկային կորուստներ, դիմում են փախուստի՝ մարտի դաշտում թողնելով մեծ քանակությամբ ռազմավար, այդ թվում՝ «Տ-72» տանկ: Այնուհետև տեղի ունեցավ հաղթական մուտք դեպի Լիսագոր և Բերձոր (այն ժամանակ՝ Լաչին): Իրականացվեց Դուշմանի երազանքը՝ տուն վերադառնալ Շուշի-Լաչին ճանապարհով: Պատերազմի օրերին հերոսի մայրը՝ տիկին Զարուհին, նրա կողքին էր և օգնում էր որդուն: Ծանր ու դաժան մարտերում Վարդանը բազմիցս վիրավորվել է:

1992 թվականի մայիսին հրամանատարության որոշմամբ ստեղծվեց Շուշիի առանձին գումարտակ: Հրամանատարի փոխարինող դարձավ Դուշմանը:

«Ես պատերազմին շատ եմ պետք, ինձ գնդակ չի կպչի, իսկ եթե զոհվեմ, միայն դավադիր ականից կլինի»:

Այդպես էլ եղավ. Վարդանը զոհվեց 1992 թվականի հուլիսի 3-ին, երբ իր զինվորական ընկերներ Երոյի (Արմեն Երիցյան) և Արայիկի (Արա Ավագյան) հետ մարտական առաջադրանք էր կատարում ԼՂՀ Մարտունու շրջանի Մյուրիշեն գյուղի մոտակայքում:

Վարդանի մարմինը հանձնվեց հայրենի հողին Երևանում՝ հայ զինվորների գերեզմանոցում՝ Եռաբլուրում:

Ժողովուրդը մեծ հարգանքով ու հպարտությամբ է հիշում ու գնահատում այն, ինչ արել է իր համար Վարդանը: Որդու զոհվելուց հետո մայրը՝ տիկին Զարուհին, չնայած դժվարություններին, կարողացավ վերանորոգել բնակարանը և նրա տունը դարձնել տուն-թանգարան՝ ընդարձակ գրադարանով: Մուտքն այստեղ ազատ է, և այցելուների պակաս չի լինում: Գալիս են այստեղ սփյուռքից, ինչպես նաև աշակերտներ, ուսանողներ, պատերազմի ընկերներ: «Մեր դուշմանը դուշմաններից-մեր Դուշման Վարդանը». այս վերնագիրն է կրում Դուշմանին նվիրված Արամայիս Սահակյանի գիրքը, որը նվիրվել է տուն-թանգարանին:

2009 թվականի հուլիսի 3-ին Արցախի Մարտունու շրջանի Մյուրիշեն գյուղում՝ այնտեղ, որտեղ զոհվել էր Վարդանը, կանգնեցվեց նոր հուշարձան:

Երախտապարտ արցախցին միշտ թարմ ծաղիկներ է խոնարհում նրա հուշարձանին և երդվում հավատարիմ մնալ նրա գաղափարներին:

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:

Տպագրվել է «Տիգրան Մեծ» ՓԲԸ-ում՝ Արշակունյաց 2:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 31. 03. 2021թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Ռ. Մուսայելյան:
Պատասխանատու քարտուղար՝ Արուսյակ Քոչարյան: